#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 5, ՀՈՒՆԻՍ 2021





ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

ՆԱԽՈՐԴ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԸ ՏԵՍ ԱՅՍՏԵՂ

Գավառի պետական համալսարան

Գավառի պետական համալսարանում Փաստերի ստուգման լաբորատորիայի մեկնարկը տրվեց փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ: Համաձայն հուշագրի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն կազմակերպում է լրագրության պրակտիկ լաբորատորիա ԳՊՀ ուսանողների համար՝ փաստերի ստուգման և ապատեղեկատվության դեմ պայքարի գործիքների և համապատասխան դասընթացների անցկացման համար: Դասընթացները վարում է ծրագրի շրջանակներում վերապատրաստում անցած. ԳՊՀ դասախոս Պապին Մուրադյանը: «Փաստերի ստուգում» դասընթացն իրականացվել է երկու ուղղությամբ. ԳՊՀ իրավագիտություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների և ոլորտով հետաքրքրված ուսանողներ՝ հիմնականում IT բաժնում սովորող:

The U.S. Embassy in Armenia

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ-Հայաստան

Տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակներիի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Գավառի պետական համալսարանում Փաստերի ստուգման լաբորատորիայի աշխատանքների մեկնարկը տրվել է 2020 թ.-ի սեպտեմբերից:
Ուսանողները տեղեկացվել են ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի և ուսանողական խորհրդի միջոցով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գավառի պետական համալսարանում լրագրության ֆակուլտետ կամ բաժին չկա՝ «Փաստերի ստուգում» դասընթացն իրականացվում է երկու ուղղությամբ. ԳՊՀ իրավագիտություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների և ոլորտով հետաքրքրված ուսանողներ՝ հիմնականում IT բաժնում սովորող:
2000թ. սեպտեմբեր-դեկտեմբեր՝ յուրաքանչյուր կիրակի՝ ժամը 9:00-10:10, «Վիրտուալ լսարան» տիրույթում՝ «Տեղեկատվական իրավունք» առարկայի շրջանակում: 2021թ. հունվարից մինչեւ այժմ՝ նոր խմբի ուսանողների հետ յուրաքանչյուր շաբաթ 2 կամ 3 օնլայն հանդիպում՝ 2 լսարանային ժամ տեւողությամբ:
Դասերը հիմնականում անցկացնում են օնլայն: Իրավագիտություն բաժնի մագիստրոսների հետ «Տեղեկատվական իրավունք» առարկային զուգընթաց ներկայացվել են «Փաստերի ստուգում» և «Լրագրողների տեղեկություն ստանալու իրավունք» ձեռնարկում առկա տեսական գիտելիքն ու դիտել ձեռնարկում առկա տեսանյութերը: Ապա ուսանողները «Տեղեկատվական իրավունք» առարկայի գործնական պարապմունների շարքում իրականացրել են նաև փաստերի ստուգման գործընթաց: Կատարված աշխատանքները քննարկվել են հաջորդ դասընթացի ժամանակ:

Դասավանդող՝
Պապին Մուրադյան

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, Իրավագիտություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրս՝
1.Սիրուշ Գյարգրցյան
2.Սուսաննա Մարգարյան
3.Ազատ Սաֆարյան
4.Բաբկեն Սաղաթելյան
5.Արմինե Նազարյան
Բնագիտական ֆակուլտետ, Համակարգչային ճարտարագիտություն բաժին, 1-ին կուրս՝
6.Լիանա Հայրապետյան
7.Արմինե Սուչյան
8.Մերի Հրաությունյան
9.Մելանյա Պետրոսյան - Բնագիտական ֆակուլտետ, Սերվիսի բաժին, 2-րդ կուրս
10.Անահիտ Շահինյան - Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, Իրավագիտություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրս:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ.

Եթե լրագրողին պետք է ճշտել սոցցանցային հաշվի իրական լինելը, իհարկե, ամենաարդյունավետ ձևն է տվյալ օգտատիրոջ հետ կապի մեջ մտնել և տեսաձայնային կապ առաջարկել: Նման դեպքերը հազվադեպ են, սակայն աղբյուրն այդպես կարող է հաստատել, որ ինքը իրական է:
Լրագրողն ստիպված է ինքնուրույն հասկանալ կեղծ է, թե իրական տվյալ օգտատերը: Առաջին քայլը պետք է լինի օգտատիրոջ լուսանկարի ստուգումը որոնողական համակարգերի միջոցով: Երբեմն կեղծ օգտատերերի նկարները հայտնաբերվում են այլ օգտատերերի մոտ կամ նույնիսկ ամսագրերում: Twitter – ի ու Instagram – ի դեպքում հարկավոր է ուսումնասիրել գրառումների քանակը և ակտիվությունը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գավառի պետական համալսարանի փաստերի ստուգման Լաբորատորիայի ուսանողները «Zoom» հարթակում հանդիպելեն «Շանթ» հեռուստաընկերության լրագրող, ԳՊՀ «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի առաջին շրջանավարտներից Տիգրան Հովակիմյանի հետ: «Գեղամա» մարզային հեռուստաընկերությունում, ապա «Շանթ»-ում աշխատելու ընթացքում Տիգրանի համար սկզբունքային հարց է եղել փաստերի համակողմանի ստուգումը: Նրա խոսքերով՝ լուրը հրապարակելուց առաջ կասկածելի հարցերը ճշտել է տարբեր աղբյուրներից: Ուսանողի այն հարցին, թե եղեղ են դեպքեր, որ եթեր հեռարձակվելուց հետո պարզվի, որ փաստացի անճշտություն է եղել իր նյութում, Տիգրան Հովակիմյանը պատասխանեց՝ բարեբախտաբար, դեռեւս նման դեպք չի եղել: Հարց ու պատասխանից հետո, ուսանողներներն էլ ներկայացրին ԳՊՀ Փաստերի ստուգման լաբորատորիայում իրենց կատարած աշխատանքները:



ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լաբորատորիայի աշխատանքներում ներգրավվեցին ԳՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողներ (իրավագիտություն, բանասիրություն, IT) եւ իրենց ունեցած մասնագիտական գիտելիքներին ավելացրին փաստերի ստուգմանն ու ապատեղեկատվության դեմ պայքարին վերաբերող գիտելիքներ ու հմտություններ, միաժամանակ սեղմ ժամկետում տիրապետեցին լրագրողական նյութեր գրելու առանձնահատկություններին:
Ուսանողները պարբերաբար մասնակցել են ԻԱԿ-ի կողմից կազմակերպված «Փաստերի ստուգման»-ը վերաբերող սեմինար-դասընթացների, ինչպես նաև Լաբորատորիայի գործունեության ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ:

- 24.03.2021թ. «Tageszeitung» (Թագեսցայթունգ) օրաթերթի խմբագիր Տիգրան Պետրոսյանի հետ հանդիպում քննարկում:
- 25-27.05.2021թ.«Փաստերի ստուգումը ուսանողների համար» առցանց դասընթացին մասնակցություն:
- 3 և 14. 06. 2021թ. «Զրպարտություն, վիրավորանք, ատելության խոսք. ինչպես պաշտպանվել» թեմայով առցանց հանդիպումներին մասնակցություն:

Լաբորատորիայի հետագա աշխատանքների շարունակականությունը ապահովելու համար դասընթացավրը առաջարկությամբ դիմել է ԳՊՀ ռեկտորին, որպեսզի 2021թ.-ի սեպտեմբերից շարունակվի «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացը, որի շրջանակում որոշակի ժամաքանակ հատկացվի «Փաստերի ստուգման» թեմային:Ինչպես նաև ԳՊՀ Իրավագիտություն բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուսում «Տեղեկատվական իրավունք» առարկայի շրջանակում ուսանոսների գործնական աշխատանքներում ներառել փաստերի ստուգմանն առնչվող թեմային

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

ՀԱՆՔԱՓՈՐԻՆ ԳՏԵԼ ԵՆ ՀԱՆՔԻ ՓԼՎԵԼՈՒՑ 17 ՏԱՐԻ ԱՆՑ ՈՂՋ ԵՒ ԱՌՈՂՋ ՎԻՃԱԿՈՒՄ...

Արազ Սաֆարյան

Չինացի հանքագործները էքսկավատորով փորում էին մի լքված հանքավայր, որտեղ 17 տարի առաջ տեղի էր ունեցել ավերիչ երկրաշարժ: Այն, ինչ գտան նրանք այնտեղ, շոկային էր: 7 տարի առաջ Չինաստանի արեւելքում տեղի էր ունեցել 7,8 բալանոց երկրաշարժ, որի արդյունքում հանքավայրը, որտեղ աշխատում էին 118 հանքագործներ, փլուզվել էր: Այս ողբերգական դեպքից հետո, հանքավայրի այդ հատվածը չէր շահագործվում: Այնուամենայնիվ, վերջերս հենց այդ հատվածում մի խումբ հանքագործներ վերսկսել էին հանքափորման աշխատանքները:

Աշխատանքներ իրականացնելիս նրանք հայտնաբերում են հանքափորին, ում հաջողվել էր որջ մնալ 17 տարվա ընթացքում: 59-ամյա հանքափոր Չունգ Վաին շատ ծանր առողջական վիճակում էր գտնվել: Նրան անհապաղ հասցրել են մոտակա հիվանդանոց, որտեղ բժիշկները ստուգել են նրա ֆիզիկական եւ հոգեբանական վիճակը: Երկրաշարժի ժամանակ փայտից պատրաստված կոնստրուկցիան չէր դիմացել եւ արդյունքում 118 հանքափոր զոհվել էր, բացի Չունգից: Միակ պատճառը, որ նա կարողացել էր այսքան ժամանակ դիմանալ գետնի տակ, դա օդափոխման համակարգն էր, որի շնորհիվ նա մաքուր օդ է շնչել: Միաժամանակ փլուզման պահին հանքավայրում մեծ քանակությամբ սննդի պաշար էր պահված եղել: Այդ ընթացքում նա ստիպված է եղել սնվել առնետներով եւ ջրիմուռներով: Սա պատմության մեջ հազվագյուտ դեպք է, երբ մարդը կարողացել է ողջ մնալ երկար ժամանակ նման ծանր պայմաններում:

Այս ինֆորմացիայի ճշտությունը կարելի է ստուգել մի քանի եղանակով.

Կայքի հետազոտության արդյուքում պարզ դարձավ, որ կայքը արգելափակում է մկնիկի ձախ հպումը դրանով իսկ չթողնելով կատարել կայքի միջավայրում որոշ գործողություններ: Բացի այդ կայքը չունի հետադարձ կապի հնարավորություն: Այս ամենից պարզ է դառնում, որ կայքը առանց որեւիցե խնդրի կարող է հրապարակել կեղծ տեղեկատվություն: Նույն վերնագրով այլ որոնողական համակարգերով (**google.com, bing.com, yandex.ru, yahoo.ru, baido.com, ask.com**) փաստեր որոնելուց պարզ դարձավ, որ նման տեղեկություն հրապարակվել էր դեռ 2016 թ-ին օտարերկրյա լրատվական կայքերում, եւ հաշվի առնելով որ live49media.com կայքում այն հայտնվել է 2021 թ-ի մարտի 15-ին՝ խոսում է կայքի ոչ պրոֆեսիոնալության եւ մասնագիտական ցածր որակների մասին:

Կայքում պատկերված լուսանկարները images.google.com կայքի միջոցով ստուգելու արդյունքում պարզ դարձավ որ լուսանկարները արված են «Տոկիո»-ում, այլ ոչ թե՝ Չինաստանում, եւ որ նման պատահար Չինաստանում տեղի չի ունեցել:

ՏԱ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

20 Տարի
2001 - 2021
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Միասին Տեղեկատվության Ազատության Համար

foi@foi.am

+374 91 407836
+374 91 700 974

#ԱՆՎՃԱՐ_ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տեղեկատվության ազատության ոլորտում

ԴԻՄԵՔ ՄԵԶ, եթե

- չգիտեք՝ ինչպես դիմել տեղեկություն ստանալու համար
- ստացել եք թերի կամ ոչ լիարժեք պատասխան
- խախտվել են տեղեկություն ստանալու ժամկետները
- պետական մարմինները մերժել են տրամադրել պահանջվող տեղեկությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 5
Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի հետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը՝ մեդիափորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի մասնակցությամբ: Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

Ֆեյքաքաղ #5. բացահայտում ենք ֆեյք լուսանկարները

Հաճելի դիտում:
Կհանդիպենք հաջորդ ամիս

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3,
4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0002, Ղազար Փարպեցու 9բ,
27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am